95. Վերոյիշեալ եղելութիւնները ոչ միայն չէին յուսահատեցնում «եղբարց» միաբանութեան ղեկավարներին Սարգսին, Թառայեանցին, Անտոնեանցին, Ծկըտ Ռոստոմին և այլոց, այլ ապեւի գրդռում էին նոցա գործունէութիւնը՝ միաբանութիւնը հաստատուն պահելու և առանձին եկեղեցի կազմելու գործը առաջ տանելու։ Նոքա արտասահման, այսինքն Բազել ուղարկեցին գեռ սկզբում 3 երիտասարդներ՝ Իսրայէլ Դօլուխանեանց, Մովսէս Ագնաւուրեանց և Յովակիմ ումն։

Այս պարոնները պատօր և ուսուցիչ պիտի լինէին. կենսական ծախքերը ամբողջապէս հոգացւում էին Բազէլեան ընկերութեան կողմից։

Շամախու մէջ Սարգիս վարժապետը շարունակում էր իր ուսուցչական և քարոզչական գործունէութիւնը։ Քարոզի համար ժողովում էին ըստ մեծի մասին վարպետ Սարգսի տանը։ Երգում էին մանր մունր բաներ կամ Սարգսի և կամ այլոց կարկատած. սոցանից նշանաւոր և գործածական երգն էր Գասպար բէգ Ղազապեանցի յօրինած մի երգն, որի մէջ իբր թէ Քրիստոսի մատնուելը և չարչարանքը էր պատմում։

Նա երգուում էր «Առաւօտ Լուսոյ» յայտնի եղանակով և այսպէս էր սկսում։

Օրհնեալ լինիս դու,
Սիրելի Փրկիչ,
Քո անունիդ վառք,
Որ մեզաց համար
Երկնաւոր Հօրդ
Եղար պատարագ.
Ա՜խ, եկաւ Յուդան
Կորստի Որդին
Քեզ՝ Տէրիդ մատնեց։ Եւայլն[1]։

---

[1]) Ղորմելի մարդիկը թողած մեր եկեղեցւոյ հոգեւոր, հոգերուղիս, քաղցրաձայն երգերը և Աստուածախօս աղօթքները, մի Գասպար բէգի յօրինած անոճ և անհամ երգով են զուարճանում . .